ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01/20
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ, ԲՆԱԿԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ք. Բյուրեղավան 05 փետրվարի 2020 թ.

Նիստին մասնակցում էին՝ Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 08-ի N44-Ա որոշմամբ ստեղծված համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովը հետևյալ կազմով՝

Միշա Եղիազարյան - համայնքի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

Արգամ Շառյան- «Բյուրեղավան» համատիրության նախագահ,

Վոլոդյա Հայրապետյան- համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ,

Կարինե Բաղդասարյան- համայնքապետարանի աշխատակազմի գործավար,

Աննա Սահրատյան- համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ:

Նիստի օրակարգի հարցը

Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 4-րդ հանրակացարանի 123, 124, 125 (ներկայիս՝ 50 շենք 113 բնակարան) սենյակները անհատույց օտարելու մասին դիմումի վերաբերյալ:

Զեկուցող՝ հանձնաժողովի նախագահ Միշա Եղիազարյան:

Միշա Եղիազարյանը ներկայացրեց, որ Օղակաձև փողոցի 4-րդ հանրակացարանի 123, 124, 125 (ներկայիս՝ 50 շենք 113 բնակարան) հասցեի բնակիչ Գենադիկ Վլադիմիրի Վարդանյանը դիմում է ներկայացրել՝ Բյուրեղավանի համայնքապետարան բնակարանի անհատույց օտարման վերաբերյալ:

Լսեցին՝ հանձնաժողովի անդամ Կարինե Բաղդասարյանին:

Նա ներկայացրեց, որ դիմումը վերանայվել է, ճշտվել է բնակչի համայնքի բյուջեի նկատմամբ պարտավորությունները, տեղեկացվել է փաստաթղթերի բացթողումների մասին, որից հետո

դրանք լրացվել են: Ներկայացված փաստաթղթերը բավարարում է դիմումատուին նշված բնակարանը անհատույց օտարման համար:

Հանձնաժողովը առաջարկեց՝ համայնքի սեփականություն հանդիսացող Օղակաձև փողոցի 50 շենքի 113 բնակարանը բնակիչ Գենադիկ Վլադիմիրի Վարդանյանին անհատույց օտարման հարցը ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Միշա Եղիազարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արգամ Շառյան

_____ Վոլոդյա Հայրապետյան

_____ Կարինե Բաղդասարյան

_____ Աննա Սահրատյան